



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. երկրորդ եռամսյակում /վերլուծություն/

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 46907 գործարքներ, որոնց քանակը 2013թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 15.0%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 12.5%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11149 օտարման գործարքների 74.5%-ը կազմել են առուվաճառքները, 25.1%-ը՝ նվիրատվությունները և 0.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 40.4%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.4%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2013թ. երկրորդ եռամսյակում, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 2.6%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 4.1%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 59.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. երկրորդ եռամսյակում, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 8.6%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 3.2%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Երկրորդ եռամսյակ 2012թ.	Երկրորդ եռամսյակ 2013թ.	առաջին եռամսյակ 2013թ.
Կենտրոն	410300	428000	424100
Արաբկիր	338700	355500	351900
Քանաքեռ-Զեյթուն	265800	282300	280200
Նոր-Նորք	227900	250700	245400
Ավան	238000	258750	255600
Էրեբունի	235700	248600	245300
Շենգավիթ	234600	254200	250900
Դավթաշեն	259800	274000	270300
Աջափնյակ	227000	247000	242700
Մալաթիա-Սեբաստիա	225200	239200	235900
Նուբարաշեն	140200	151500	146400
<b>Միջինը Երևանում /բացի Նորք- Մարաշից/</b>	<b>254800</b>	<b>271800</b>	<b>268100</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել են 1.4%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 980 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 6.8 %-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 7.5%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության

արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երկրորդ եռամսյակ 2012թ.	Երկրորդ եռամսյակ 2013թ.	առաջին եռամսյակ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	111400	114800	114300
	Ապարան	48600	56550	54400
	Թալին	61000	64200	62400
Արարատ	Արտաշատ	91600	94800	94500
	Մասիս	107700	115000	112800
	Վեդի	96200	99300	98500
	Արարատ	73200	75100	75100
Արմավիր	Վաղարշապատ	152500	154000	153600
	Արմավիր	117600	121000	120100
	Մեծամոր	86100	87500	86800
Գեղարքունիք	Սևան	97700	99150	99100
	Գավառ	52100	59000	58700
	Մարտունի	103200	107600	107500
	Վարդենիս	33900	44300	42500
	Ճամբարակ	21100	27700	26700
Լոռի	Վանաձոր	86300	88300	87800
	Ստեփանավան	72500	74500	74500
	Սպիտակ	99500	99800	99800
	Ալավերդի	50000	55000	54600
	Տաշիր	40700	47000	44700
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19500	20000	19800
Կոտայք	Աբովյան	152300	154700	153500
	Նոր Հաճն	128000	128500	128500
	Բյուրեղավան	107000	108100	107400
	Եղվարդ	108300	109300	109300
	Հրազդան	59000	63800	62900
	Ծաղկաձոր	292300	292500	292500
	Չարենցավան	83400	85500	84800
Շիրակ	Գյումրի	108300	109300	109300
	Արթիկ	64200	66300	66300
	Մարալիկ	35600	40100	40100
Սյունիք	Գորիս	114700	121000	118100
	Կապան	89100	92100	90900
	Սիսիան	79800	91100	89400
	Մեղրի	65700	80050	77100
	Ագարակ	40500	46000	44800
	Քաջարան	94100	94300	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	83500	94700	92700
	Եղեգնաձոր	116200	123200	119800
	Զերմուկ	100600	112000	110700
Տավուշ	Դիլիջան	103200	112700	109700
	Իջևան	111600	118100	117100
	Բերդ	49200	60000	58100

	Նոյեմբերյան	41300	49200	46700
	Այրում	24500	31500	29400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2013թ. երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել են 1.1%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1168 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 300, մարզերում միասին վերցրած՝ 868: 2013թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 5.6%-ով, ընդ որում, Երևանում՝ 2.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 6.9%-ով: 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 1.7%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 15.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 9.2%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Երկրորդ եռամսյակ 2012թ.	Երկրորդ եռամսյակ 2013թ.	առաջին եռամսյակ 2013թ.
Կենտրոն	460900	476100	472700
Արաբկիր	366600	383000	379700
Քանաքեռ Զեյթուն	278000	295000	292300
Նորք Մարաշ	304500	319200	316000
Ավան	257800	270500	268300
Էրեբունի	227100	239500	236000
Շենգավիթ	243100	255000	252500
Դավթաշեն	261600	276000	273400
Աջափնյակ	237500	250050	246700
Մալաթիա Սեբաստիա	225400	238000	235700
Նուբարաշեն	144500	150500	148400
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	<b>273400</b>	<b>286600</b>	<b>283800</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 1.0% :

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ

շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երկրորդ եռամսյակ 2012թ.	Երկրորդ եռամսյակ 2013թ.	առաջին եռամսյակ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	131900	136200	135600
	Ապարան	52100	60000	59100
	Թալին	68600	69200	68600
Արարատ	Արտաշատ	97900	100000	99100
	Մասիս	110700	115100	114400
	Վեդի	100000	102300	101400
	Արարատ	87100	88000	87900
Արմավիր	Վաղարշապատ	150800	153100	152600
	Արմավիր	103200	107000	106700
Գեղարքունիք	Սևան	92200	94800	94400
	Գավառ	51600	57100	57000
	Մարտունի	91100	96000	95200
	Վարդենիս	34000	41000	39500
	Ճամբարակ	25900	31100	29900
Լոռի	Վանաձոր	96100	100000	99400
	Ստեփանավան	87100	90000	89100
	Սպիտակ	112500	114000	113700
	Ալավերդի	46500	50000	48300
	Տաշիր	50100	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13200	14000	13500
	Ախթալա	29400	30000	29700
Կոտայք	Աբովյան	151800	156600	155100
	Նոր Հաճն	128900	129800	129800
	Բյուրեղավան	119900	120500	120200
	Եղվարդ	114900	116100	116100
	Հրազդան	78200	82500	82400
	Ծաղկաձոր	304500	305000	305000
	Զարենցավան	81300	83000	82700
Շիրակի	Գյումրի	116300	118500	118200
	Արթիկ	61000	63100	63100
	Մարալիկ	48000	52000	51800
Սյունիք	Գորիս	126900	130000	129400
	Կապան	97900	99900	99100
	Սիսիան	88600	96400	94100
	Մեղրի	74800	84500	83200
	Ագարակ	45900	46900	46900
	Դաստակերտ	11600	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	82300	90000	89000
	Եղեգնաձոր	111200	116600	116600
	Զերմուկ	120000	131200	129800
Տավուշ	Դիլիջան	104800	112800	111100
	Իջևան	119900	123100	122000
	Բերդ	57700	60000	59000
	Նոյեմբերյան	45900	48100	46900

	Այրում	34200	36100	34800
--	--------	-------	-------	-------

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 0.7 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3672 միավոր /1468.04 հա/ հողեր, որից Երևանում՝ 445 միավոր /24.55 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1790 միավոր /1317.48 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /2.31 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1232 միավոր /98.85 հա/, որից Երևանում՝ 234 միավոր /7.90 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 562 միավոր /36.25 հա/, որից Երևանում՝ 186 միավոր /12.19 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 51 միավոր /9.90 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /2.15 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 15 միավոր /3.81 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 16 միավոր /1.52 հա/,
- ջրային հողեր՝ 6 միավոր /0.23 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. երկրորդ եռամսյակում օտարված հողերից 3006 միավորի /1230.42 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 382 միավոր /20.08 հա/, նվիրատվության գործարքներ՝ 647 միավորի /235.96 հա/, որից Երևանում՝ 56 միավոր /4.34 հա/ և փոխանակության գործարքներ՝ 19 միավորի /1.66 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /0.13 հա/:

Հանրապետությունում 2013թ. երկրորդ եռամսյակում 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 2.8%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 9.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 28.9%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 271.74 հա, որից 258.37 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 29.0%-ը կամ 873 գործարքներ /274.85 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 221 միավոր /6.06 հա/, իսկ 69.7%-ը կամ 2095 միավորը /949.35 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 158 միավոր /14.01 հա/: 2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 38 գործարք /6.22 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	4	0.39	106	1.04	111	4.63	6	0.62	9	1.77	91	5.16	52	6.47
Արագածոտն	106	100.46	1	0.10	6	0.40	57	1.87	223	131.23	0	0.00	74	8.70	6	0.81
Արարատ	25	27.65	1	0.03	9	0.44	22	0.24	171	85.44	4	2.18	120	10.09	17	0.32
Արմավիր	16	37.82	3	0.33	5	0.22	12	0.12	213	220.55	2	0.02	126	12.45	9	0.22
Գեղարքունիք	10	32.20	2	0.13	39	2.97	25	1.71	67	65.47	1	0.12	37	4.50	2	0.30
Լոռի	0	0.00	6	0.58	19	0.70	34	0.51	58	42.20	1	0.12	24	2.77	6	0.07
Կոտայք	30	29.15	2	0.20	31	1.95	34	1.91	208	94.85	3	1.38	190	15.72	25	4.13
Շիրակ	1	0.84	1	0.01	19	0.51	14	0.45	83	80.48	0	0.00	31	3.47	4	0.34
Սյունիք	5	3.50	2	0.86	5	0.03	14	0.35	75	68.25	1	0.01	10	0.74	5	0.10
Վայոց Ձոր	10	10.41	2	0.19	11	0.79	9	0.09	35	53.92	0	0.00	22	2.45	3	0.09
Տավուշ	2	1.00	3	0.32	17	1.01	20	4.32	30	13.39	0	0.00	26	2.10	13	3.66
Ընդամենը	205	243.03	27	3.14	267	10.06	352	16.20	1169	856.40	21	5.60	751	68.15	142	16.51

Ստորև ներկայացվում է 2013թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	185	3.73	3	0.19	106	1.04	76	2.50	36	2.33	0	0.00	1	0.20	0	0.00	35	2.13
Արագածոտն	41	1.54	1	0.10	1	0.04	39	1.40	47	77.49	24	76.66	0	0.00	5	0.36	18	0.47
Արարատ	8	0.20	0	0.00	4	0.15	4	0.05	47	27.59	23	27.07	1	0.04	5	0.29	18	0.19
Արմավիր	4	0.03	0	0.00	2	0.02	2	0.01	31	38.11	15	37.45	3	0.33	3	0.21	10	0.12
Գեղարքունիք	9	0.28	0	0.00	9	0.28	0	0.00	67	36.73	10	32.20	2	0.13	30	2.69	25	1.71
Լոռի	16	0.114	1	0.004	6	0.02	9	0.09	43	1.68	0	0.00	5	0.58	13	0.68	25	0.42
Կոտայք	7	0.29	1	0.10	4	0.15	2	0.04	88	32.69	28	28.91	1	0.10	27	1.81	32	1.87
Շիրակ	15	0.33	0	0.00	8	0.10	7	0.23	20	1.47	1	0.84	1	0.01	11	0.41	7	0.21
Սյունիք	2	0.86	2	0.86	0	0.00	0	0.00	24	3.88	5	3.50	0	0.00	5	0.03	14	0.35
Վայոց Ձոր	5	0.043	0	0.00	1	0.003	4	0.04	27	11.44	10	10.41	2	0.19	10	0.79	5	0.05
Տավուշ	2	0.04	0	0.00	1	0.03	1	0.01	40	6.60	2	1.00	3	0.32	16	0.98	19	4.30
Ընդամենը	294	7.46	8	1.25	142	1.83	144	4.37	470	240.01	118	218.04	19	1.90	125	8.25	208	11.82

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 87 գործարք /24.98 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. երկրորդ եռամսյակում, 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 14.4%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 9.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 18.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 29.4%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 76.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	18	71.77	76.6	1105.8	421.9	133	41.66	365.0	12000.0	3601.4
Ապարան	2	1.13	137.5	2982.9	1560.2	20	17.20	86.5	2727.3	734.2
Թալին	4	3.75	38.2	640.0	168.8	33	20.20	93.6	5494.5	667.0
Ծաղկահովիտ						19	39.56	79.5	1000.0	275.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	6	10.72	123.7	5555.6	4216.8	80	24.76	335.1	10833.3	2836.8
Մասիս	14	13.73	47.3	2104.0	912.7	38	13.39	200.0	11904.8	3112.3
Վեդի	3	2.63	80.0	263.8	171.9	51	46.93	207.0	10795.1	1844.8
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	8	31.12	60.4	1042.1	271.2	98	57.76	294.3	9090.0	1352.5
Բաղրամյան	3	3.41	70.9	70.9	70.9	45	125.01	90.6	2561.1	775.0
Վաղարշապատ	4	2.92	73.5	1244.3	716.4	61	27.74	444.4	11764.7	2323.3
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	2	1.50	616.2	635.5	625.8	19	5.86	199.8	1875.0	421.2
Ճամբարակ						16	7.73	60.5	953.3	355.2
Մարտունի						3	0.50	51.1	2850.0	738.5
Սևան	8	30.70	117.9	1221.0	763.7	1	0.43	52.2	2134.8	318.5
Վարդենիս						28	50.94	41.2	2575.1	418.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						8	6.04	170.4	6424.2	599.9
Գուգարք						18	3.91	234.6	6065.9	762.7
Սպիտակ						2	1.15	250.0	5555.5	730.8
Ստեփանավան						9	15.70	90.6	1686.6	320.8
Տաշիր						18	9.68	45.3	1384.4	156.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	6	2.52	232.0	2467.3	540.3	101	37.62	279.3	11942.7	4410.3



Եղվարդ	17	19.67	75.8	1052.7	388.1	82	34.88	174.4	11971.8	2606.1
Հրազդան	5	6.72	147.5	1335.4	909.8	20	10.60	130.5	10256.4	1638.4
Շիրակի մարզ										
Ախուրյան						27	17.04	252.0	1693.1	623.7
Ամասիա						7	21.43	40.9	261.0	127.5
Անի						16	22.38	110.6	546.9	385.7
Աշոցք						5	2.88	58.5	215.8	126.8
Արթիկ	1	0.84	420.0	420.0	420.0	28	16.75	79.4	1428.6	415.8
Սյունիքի մարզ										
Գորիս	4	2.50	149.9	150.1	150.0	27	16.71	92.6	1023.2	725.1
Կապան	1	1.00	621.0	621.0	621.0	10	4.71	120.0	841.6	355.8
Մեղրի						8	1.74	193.0	3000.0	732.7
Սիսիան						29	44.91	46.3	1977.4	542.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	2.75	39.4	206.3	74.3	21	43.17	125.0	10000.0	1915.0
Վայք	5	7.66	64.1	8505.0	1528.1	14	10.75	58.8	1430.7	630.8
Տավուշի մարզ										
Բերդ						10	1.97	213.3	3783.8	685.5
Իջևան						7	4.76	267.5	9454.5	1245.2
Նոյեմբերյան	2	1.00	158.4	158.4	158.4	13	6.66	46.7	7368.4	876.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	1110.0	2625.0	3183.4	2904.2	53	47661.0	130.7	22200.0	2574.7
Ապարան	1	508.0	176.9	176.9	176.9	6	7502.0	124.1	609.6	390.0
Թալին	2	1937.0	213.2	213.2	213.2	8	14584.0	63.2	1454.8	152.4
Ծաղկահովիտ						7	17298.8	60.0	214.3	89.7
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1000.0	145.0	145.0	145.0	36	36823.4	173.9	7140.3	896.3
Մասիս	2	1336.8	891.1	3693.8	2292.4	59	40010.4	187.5	25000.0	1211.5
Վեդի	2	608.3	840.9	1614.6	1227.8	24	22955.2	126.1	5000.0	661.6
Արմավիրի մարզ										
Արմավիր						40	41146.4	131.6	9090.9	1280.6
Բաղրամյան	1	1200.0	233.1	233.1	233.1	2	2882.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	857.9	523.8	2009.7	1266.8	80	76935.3	197.4	26528.4	1529.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	13	13752.8	113.5	895.0	216.5	7	6467.0	186.6	1084.3	683.2
Ճամբարակ	2	2077.0	106.6	108.7	107.7	2	7422.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	11	9342.8	129.0	410.7	329.2	22	21633.0	119.3	5000.0	282.7
Սևան	3	1674.0	714.2	1802.1	1226.0	1	1030.0	240.0	3110.4	315.0
Վարդենիս	1	35.2	600.0	600.0	600.0	5	8476.2	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	2	156.0	1100.0	1100.0	1100.0	1	56.0	114.3	1388.9	216.6

Գուգարք	5	249.6	2201.5	4976.6	2991.3	11	13718.0	77.9	14083.3	1262.9
Սպիտակ	5	6133.6	230.5	256.2	243.6	10	12298.0	104.9	1348.3	206.2
Ստեփանավան	1	300.0	554.4	554.4	554.4	1	1000.0	88.2	1666.7	175.5
Տաշիր						1	584.8	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	22	14563.8	407.5	5421.9	2190.8	105	84247.6	264.5	35353.5	1993.4
Եղվարդ	4	3338.0	1261.5	3381.0	2326.6	75	60846.4	173.6	27000.0	2856.6
Հրազդան	1	180.0	1411.1	1411.1	1411.1	9	11330.0	117.7	34848.5	1318.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	1260.0	1400.0	3150.0	2363.9	14	16498.4	113.6	18750.0	333.8
Ամասիա	1	416.0	165.4	165.4	165.4			45.3	274.7	71.0
Անի	2	800.0	346.8	404.6	375.7	3	7028.0	67.9	180.6	174.6
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	4	1594.1	289.7	2114.3	904.7	14	11181.0	111.8	5000.0	217.1
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1960.0	112.2	1700.0	367.9
Կապան	5	328.1	1147.9	2900.0	1567.0	4	1885.0	67.9	2638.9	301.3
Մեղրի						3	2100.0	68.5	632.9	210.2
Սիսիան						1	1410.0	123.5	875.0	209.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	8	6830.0	64.8	1496.4	422.1	17	13941.4	96.7	7659.6	504.5
Վայք	2	1052.4	862.3	931.5	896.9	5	10578.0	120.7	1448.3	220.3
Տավուշի մարզ										
Բերդ	1	2243.0	45.0	45.0	45.0	3	1733.0	75.8	810.0	116.3
Իջևան	14	7421.5	1366.2	3000.0	2401.6	21	17963.6	74.1	14423.1	515.5
Նոյեմբերյան	1	164.8	580.8	580.8	580.8	1	29.3	125.0	1948.1	228.0

2013թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2099 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.5%:

2013թ. երկրորդ եռամսյակում, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 1.4%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 1.1%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 127 բնակարանների, 207 անհատական բնակելի տների, 990 հասարակական նշանակության, 218 արտադրական նշանակության օբյեկտների, 499 միավոր /3286.94 հա/ հողերի, 6 այգետնակների և 52 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 23 վարձակալության գործարքների, այդ թվում 5 միավոր /0.04 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 70.1%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ է 61.7%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 3286.94 հա հողերից 3.02 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3283.91 հա հողերից 997.82 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.29 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 1506.84 հա, որից 533.33 հա գյուղատնտեսական նշանակության: 2013թ. երկրորդ եռամսյակում

հանրապետության մարզերում վարձակալվել են 2261.28 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2013թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5976 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ, աճել է 33.4%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 0.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.6%/, առանձնատների /24.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /7.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3101 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2013թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 26.6%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 2.5%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 597.44 հա հողեր, որից 29.30 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 89.9%-ը կամ 537.32 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.40 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 244.75 հա, որից 242.86 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 478 գործարքներ, որից 332-ը՝ Երևանում: 2013թ. առաջին եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 44.8%-ով, ընդ որում Երևանում՝ 52.3%-ով, մարզերում միասին վերցրած՝ 30.4%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 6.2%-ով, ընդ որում Երևանում՝ 25.3%-ով, մարզերում միասին վերցրած նվազել՝ 21.1%-ով:

2013թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5507 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2013թ. առաջին եռամսյակի համեմատ աճել է 9.2%-ով, իսկ 2012թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 7.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.7%/:

**« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**